11616

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«16» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 243-25

Նախաձեռնող՝ ***«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ***
Երևան, Կենտրոն, Կոնդ 1 թաղամաս, փ. 44

Գործունեությունը՝ ***Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրում բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի կառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 243 - 25

«16» հոկտեմբերի 2025թ.

Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրում բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք, Քանաքեռավան բնակավայր

Ներածական մաս. «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Քանաքեռավան բնակավայրում իրականացնել բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի կառուցում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկին:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում՝ Հրազդան գետի կիրճի աջափնյա հատվածում: Տարածքը հիմնականում հարթ է՝ ռելիեֆի վրա 0.4-0.6 մետր խորությամբ խրամուղիների առկայությամբ: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1214.0-1254.0 մետրի սահմաններում: Տեղամասում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Բնակելի թաղամասը բաղկացած կլինի շուրջ 60 նմանատիպ լուծումներով բնակելի շենքերից՝ 100 մուտքերով, ինչպես նաև նախատեսված են 4509 հատ բնակարան՝ 50-85 քմ մակերեսներով: Շենքերի հարկայնությունը հիմնականում կլինի 10-12 հարկ, որից 1-3ը՝ կիսանկուղային հարկեր:

Բարձրահարկ շենքերի տակ նախատեսված է 14000 քմ ընդհանուր մակերեսով 1100 հատ ստորգետնյա ավտոկայանատեղիների կազմակերպում: Նախատեսված են նաև 2200 հատ բացօթյա կայանատեղիներ: Ստորգետնյա ավտոկայանատեղին արտակարգ իրավիճակների ժամանակ կարող է ծառայել որպես թաքստոց:

Կառույցների տանիքները կլինեն հարթ՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ: Երեսապատումը նախատեսվում է նստվածքային և հրաբխային ծագման ապարների (տրավերտին, տուֆ) և ներկանյութի համադրությամբ ստացված նյութերով, բարձրակարգ ֆասադային ապակիով, լանդշաֆտային դիզայնի տարատեսակ լուծումներով, բարեկարգված բակային տարածքներով:

Նախագիծը մշակվել է շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ շենքերի և շինությունների մատչելիությունը, շենքի մուտքերի մոտեցումները, ինչպես նաև ստորգետնյա ավտոկայանատեղիների ելքերը հարմարեցված են լինելու սահմանափակ կարողությամբ մարդկանց համար, բնակելի շենքերի մուտքային հանգույցներն ապահովված կլինեն թեքահարթակներով և վերելակներով:

Բնակելի թաղամասի համար ջերմության հիմնական աղբյուր կծառայի գազը: Բնակելի շենքերի գազամատակարարումն իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Գազամատակարարումը նախատեսվում է արտաքին ցանցից, բնակարանների ջեռուցումը՝ անհատական կաթսաների կիրառմամբ:

Բնակելի շենքերի ջրամատակարարումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխպայմանի համաձայն: Ջրամատակարման ներքին ցանցն ավտոկայանտեղիից պոմպերի միջոցով ջուրը կանգնակներով կբարձրանա դեպի վերևի հարկեր: Հարկերում ներքին ցանցը իրականացվելու է համապատասխան հատակագծային լուծումների, իսկ արտաքին ցանցը միանալու է տեխնիկական պայմանով տրված միացման կետին և այնտեղից բերվի դեպի կառույց, որտեղից էլ միանա ներքին ցանցի պոմպերին և հակահրդեհային ջրամբարին:

Բնակելի շենքերի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն շինարարական նորմերի՝ նախատեսելով հակահրդեհային ջրամբար և պոմպակայան ավտոկայանատեղիում, այստեղից կանգնակներով ջուրը կբարձրանա դեպի վերևի հարկեր, որտեղ նախատեսվում է հակահրդեհային ծորակներ և պահարաններ:

Կենցաղային կոյուղու ներքին ցանցը կիրականացվի համապատասխան հատակագծային լուծումների: Այն նախատեսված է Ø50 և Ø110 մմ տրամագծի խողովակներով, որոնք միացված կլինեն Ø110 մմ տրամագծի կանգնակներին, որոնք էլ կմիանան համապատասխան դիտահորերին:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բնակելի շենքերի էլեկտրամատակարարումը նախատեսվում է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Ներքին էլեկտրամատակարարման ցանցում նախատեսվելու են վարդակային ցանցեր՝ աշխատանքային և կենցաղային սարքերի սնուցման համար: Առանձին խմբով սնուցումներ են նախատեսվում հրդեհների հայտնաբերման և ազդարարման, տեսահսկման և ձայնագրման համակարգի և ինտերնետային ցանցի սնուցման համար:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղ պարզեցվելուց, զտվելուց հետո անձրևաջրերը կհեռացվեն տարածքից: Նույն ցանցով և կհեռացվի շենքերի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները:

Շենքերի աղբահեռացումը կիրականացվի անհատապես՝ յուրաքանչյուր բնակչի կողմից: Աղբամանները կտեղադրվեն շենքերի հարակից տարածքներում:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 252922.1 քմ (100 %),
- ընդհանուր կառուցապատման մակերես՝ 50300 քմ,
- կառուցապատման մակերես՝ 31400 քմ (12.41 %),
- կանաչապատման մակերես՝ 104896 քմ (41.479 %),
- ճանապարհներ և սալվածքներ՝ 116626.1 քմ (46.111 %),
- ստորգետնյա հարկերի կառուցապատման մակերես՝ 54295.0 քմ (բնակելի շենքերի ստորին մաս) + 12662 քմ (ավտոկայանատեղիի մակերես),
- ստորգետնյա հարկերի ընդհանուր մակերես՝ 66730.0 քմ (բնակելի շենքերի ստորին մաս) + 12662 քմ (ավտոկայանատեղիի մակերես),
- բացօթյա ավտոկայանատեղիներ քանակ՝ 2200 հատ,
- բնակարանների մակերեսը՝ 50-85 քմ,
- մասնաշենքերի թիվը՝ 60 հատ,
- բնակարանների քանակը՝ 4509 հատ:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 350000-450000 խմ, որից 62000 խմ հողային բուսական շերտը կառանձնացվի և կպահպանվի հետագայում բարեկարգման նպատակով օգտագործման համար, իսկ մնացած ծավալը նախատեսվում է կիրառել տարածքի համահարթեցման նպատակով: Հողաբուսական շերտի պահպանությունն իրականացվելու է ՀՀ կառավարության N1404-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Նախատեսվող կանաչապատումն իրականացվելու է ներբակային հատվածում, որտեղ կլինեն խոտածածկույթ և դեկորատիվ բուսականություն (ակացիա, փռվող գիհի և ոսկեգույն թույա), ճանապարհամերձ հատվածներում, որտեղ կլինեն խոտածածկույթ և թփային բուսականությամբ կանաչապատում (գնդաձև թույա, սիզամարգ և ակացիա) և այգիներ, որոնց մակերեսը կկազմի շուրջ 40000.0 քմ: Այգիներում նախատեսվում է շուրջ 2800 տարբեր բնույթի ծառատեսակներ (թխկի, հացենի և եղևնիներ):

Կանաչ տարածքների ոռոգումը նախատեսվում է ցնցուղային սարքավորումներով, որոնք միմյանց հետ կապված կլինեն ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների և հողային աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, շինհրապարակի ցանկապատում և այլն:

Հայցվող տարածքում ստորգետնյա ջրերի հորիզոններ չկան, տարածքի արմատական ապարները ջրակալված չեն: Դա պայմանավորված է տեղամասի երկրաձևաբանական առանձնահատկություններով: Հայցվող տարածքը հարավից, հարավ-արևելքից և արևմուտքից սահմանափակվում է ձորակներով, որոնք հանդիսանում են գրունտային ջրերի և մթնոլորտային տեղումների բեռնաթափման բնական ուղիներ: Հետևաբար, ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն կանխատեսվում:

Հողային ռեսուրսների պահպանության համար շինարարական գործընթացներում նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ: Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի հատուկ հատկացված վայրեր՝ սահմանված երթուղով: Շինհրապարակում հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային աղբի հավաքումը կիրականացվի համապատասխան տարաներում և պարբերաբար կհեռացվի աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շինաղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շինաղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը և այլն:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերի պահպանում, չափագրման իրականացում և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Գործունեության շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի նորմայի սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ և այլն:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումներին, գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Նոր Հաճընի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
6. Մինչև աշխատանքներ իրականացնելն անհրաժեշտ է կատարել հողերի նպատակային, գործառնական նշանակության փոփոխություններ:
7. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բետոնի արտադրություն նախատեսելու դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, գործունեության նախագծային փաստաթղթերը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրում բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սվետլանա Կիզիրյան